

# ՆԵՐԿԱՅԱՑՉՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՌԼԱՄԵՆՏՈՒՄ

*Posted on February 10, 2011 by Keghart*



Category: [Opinions](#)



Արթուր Արմին, Լոս Անջելես, 10 փետրվար, 2011թ.

ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի կողմից հայտարարությունը՝ ստեղծել Սփյուռքի ներկայացչական պալատ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում, շատերին է գցել ցայտնոտի եւ անորոշության գիրկը:



Նախ հիշեցնեմ, որ այս գաղափարի հեղինակային իրավունքը պատկանում է ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանին (*Հրանդ Մարգարեան, Թորոնթոյի ելույթ, Asbarez, 12.08.10.*): Սակայն, այս հարցի հետ կապված ժամանակագրությունն անհրաժեշտ է ճշտել:

Արթուր Արմին, Լոս Անջելես, 10 փետրվար, 2011թ.

ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի կողմից հայտարարությունը՝ ստեղծել Սփյուռքի ներկայացչական պալատ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում, շատերին է գցել ցայտնոտի եւ անորոշության գիրկը:



Նախ հիշեցնեմ, որ այս գաղափարի հեղինակային իրավունքը պատկանում է ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանին (*Հրանդ Մարգարեան, Թորոնթոյի ելույթ, Asbarez, 12.08.10.*): Սակայն, այս հարցի հետ կապված ժամանակագրությունն անհրաժեշտ է ճշտել:

2010 թվականի Նոյեմբերին, Հ: Սասունեանի գլխավորությամբ, նախաձեռնողական մի խումբ USC համալսարանում կազմակերպեց “Հայկական սփյուռք. ընտրովի ղեկավարություն եւ համաշխարհային կառույց” թեմայով սիմպոզիում: Սփյուռքը, որպես առանձնակի կառույց դարձնելու նախաձեռնության դեմ քննադատությամբ հողվածներով հանդես եկան տողերիս հեղինակը (*Արթուր Արմին, “Ազգային ջոջերը եւ Սփյուռքի ընտրովի ղեկավարությունը”, 168 Ժամ Օրաթերթ, 11.27.10*), Ռազմիկ Շիրինյանը (*Razmig B. Shirinian, “Looking Beyond the Diaspora Structure,” Asbarez, 12.10.10*), ՀՌԱԿ ատենապետ Հարություն Առաքելյանը (*Հարություն Առաքելյան, “Հայկական սփյուռքի ընտրովի ղեկավարության եւ համաշխարհային կառույց ստեղծելու գաղափարի շուրջ”, Լույսաշխարհ, 12.11.10*), եւ իհարկե, քննադատությամբ հատկանշական էր Հրանդ Մարգարեանի Թորոնթոյի ելույթը (*Asbarez, 12.08.10.*), որը մատնանշելով այդ նախաձեռնության վտանգավորությունը՝ որպես հայության մասնատում, առաջարկեց “Սփյուռքի ներկայացչու-թյուն Հայաստանի պառլամենտում” գաղափարը: Շատերը, ինչպես նաեւ ես, հասկանում ենք, որ Հայաստանի իշխանությունները “Հայ-թուրքական հարաբերություններ” տխրահռչակ քաղաքականությունից հետո, այս գաղափարը կարող են օգտագործել յուրովի՝ որպես Սփյուռքի “սիրտը շահելու” կամ “սփյուռքին քաղաքական գործիք” դարձնելու նպատակայնություն: Սակայն, սփյուռքից բազմաթիվ քաղաքական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ հարցադրումներ են անում, չհասկանալով՝ այս կամ այն

համազգային խնդրի **“անհրաժեշտութիւնն եւ հնարավոր իրագործում”** պատճառ-  
հետեւանքային կապը:

Ոմանց համար փորձենք հստակեցնել խնդրի կարեւորութիւնը եւ գաղափարի  
հնարավոր իրագործման ուրվագծերը պարզ հարցադրումներով:

### **ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ**

#### **ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ**

##### **Հարցադրում 1-ին`**

Արդյո՞ք Հայաստանից դուրս, աշխարհով մեկ սփռված հայութեան համար Հայաստանը  
ընկալվում է համայն հայութեան հայրենիք:

##### **Հարցադրում 2-րդ`**

Եթե վերելի հարցի պատասխանն “այո” է, ապա արդյո՞ք դրանից չի բխում, որ  
Հայաստանի Հանրապետութիւնը պետք է լինի` համահայկական, համազգային  
պետութիւն, եւ սփյուռքային խնդիրներն ու կարիքները պետք է դառնան ՀՀ պետութեան  
հետաքրքրութեան շրջանակներում:

##### **Հարցադրում 3-րդ`**

Եթե Սփյուռքն իր առջեւ ունի` հայապահպանման պայքար,- հայոց լեզվի, հայոց  
պատմութեան, ազգային ինքնութեան գիտակցութեան ամրապնդում, հայոց եղեռնի  
միջազգային ճանաչողութիւն եւ այլն խնդիրներ, ապա արդյո՞ք այս խնդիրները  
Հայաստանի Հանրապետութիւնում ապրող բնակչութեան շահերից են բխում, եւ  
ընդհանրական համազգային շահեր են:

##### **Հարցադրում 4-րդ`**

Արդյո՞ք պետութիւնը` որպէս կառույց, առավել կազմակերպված լծակ չէ, որը կարելի է  
օգտագործել Սփյուռքը կազմակերպելու, եւ նրա առջեւ ծառայած խնդիրները լուծելու  
համար: Եվ եթե այս հարցադրման պատասխանն “այո” է, ապա ո՞ր տարբերակն է  
առավել ճիշտ` դրսում ունենալ համասփյուռքային առանձնակի կառույց, թե՞ մայր  
հայրենիքում եւ նրա շուրջ կենտրոնացնել սփյուռքային ուժերը:

Կարծում եմ, որ վերելում բերված հարցերն ինքնին կանխանշում են բնական եւ  
տրամաբանական դրական պատասխան, եւ գոնե տեսականորեն, թե՛ սփյուռքահայր,  
թե՛ հայաստաբնակը կունենան նույն պատասխանը: Այո՛, Հայաստանը համայն  
հայութեան հայրենիքն է, այո՛, Հայաստան պետութիւնը պետք է դառնա  
համահայկական շահերի արտահայտողը, այո՛ սփյուռքի առջեւ ծառայած հիմ-նական  
գերխնդիրները ոչ թե Հայաստանյան, այլ` համազգային նշանակութեան խնդիրներ են,

այդ՝ մայր հայրենիքում եւ նրա շուրջ է պետք կենտրոնացնել սփյուռքյան ուժերը, եւ անհեթեթություն է՝ Հայաստանը շրջանցող համասփյուռքյան առանձնակի կառույց ստեղծելու գաղափարը:

**ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ**

**Հարցադրում 1-ին՝**

Եթե Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի սփյուռքյան ներկայացուցիչների պալատում պետք է ընդունվեն որոշումներ եւ օրենքներ նաեւ սփյուռքի համար, ապա արդյո՞ք անհրաժեշտ է, որ պառլամենտի կազմում ընդգրկվեն հիմնականում այնպիսի ներկայացուցիչներ, որոնց ընդունած որոշումները ոչ թե մնան օդում, այլ իրագործվեն սփյուռքում: Որեմն, ովքե՞ր կարող են լինել այդ պալատի ներկայացուցիչները:

**Պատասխան՝**

Պարզ է, որ Հայաստանի Ազգային Ժողովի սփյուռքյան ներկայացուցիչների պալատում պետք է ընդգրկվեն այս կամ այն երկրում գոյություն ունեցող ռեզիդենտ հասարակական բոլոր լուրջ կազմակերպությունների ներկայացուցիչները, որպեսզի ընդունած որոշումներն իրագործվեն սփյուռքում հե՛նց այդ կազմակերպությունների միջոցով: Եվ ՀՀ Ազգային Ժողովում նման ներկայացուցչական պալատ հնարավոր է ստեղծել համամասնական “ընտրության” տարբերակով: Ավելին, այսօր, բավականաչափ կազմակերպված սփյուռքը, ի վերջո՝ իրավականորեն, այս կամ այն օտար երկրում գրանցված է որպես հասարակական կազմակերպությունների հավաքականություն:

**Հարցադրում 2-րդ՝**

Արդյո՞ք սփյուռքահայ պառլամենտականը լիարժեք հասկանում է Հայաստանի բնակչության կենցաղային կամ օրենսդրական կարիքների հետ կապված խնդիրները, եւ իրավունք ունի՞ որոշում կայացնել Հայաստանում ապրողի համար: Եվ նաեւ հակառակը՝ արդյո՞ք Հայաստանում ապրողը հասկանում է սփյուռքը եւ սփյուռքահայի փոխարեն իրավունք ունի նրա համար որոշումներ կայացնել:

**Պատասխան՝**

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի երկու պալատների օրենսդրական որոշումներ կայացնելու իրավունքները պետք է հստակ բաժանվի եւ սահմանվի: Ի վերջո, ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում կան տեղայնական խնդիրներ եւ կան համազգային խնդիրներ: Համազգային խնդիրները կարող են արժարծել երկու պալատները միասին, իսկ միայն Հայաստանի բնակչությանը կամ սփյուռքին վերաբերող կազմակերպչական, մարտավարական եւ ռազմավարական հարցերը կարող են դիտարկվել առանձնաբար, երկու տարբեր պալատներում:

Եվ վերջում ամենակարեւոր հարցը՝ ինչո՞ւ է անհրաժեշտ ստեղծել Սփյուռքի

Ներկայացրեցի պալատ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում ընդհանրապես:

**Պատասխան՝**

Անհրաժեշտ է բոլոր ուժերը կենտրոնացնել եւ առավել արդյունավետ դարձնել համահայկական ներուժը՝ հայության առջեւ ծառայած գերխնդիրների լուծման համար:

Անհրաժեշտ է հասկանալ եւ տարբերակել՝ հայրենի պետությունը Հայաստանի իշխանություններից: Հայրենի պետության մեջ ունենալ սփյուռքյան ներկայացուցչական պալատ, որը համազգային նշանակության կառույց կարող է լինել, չի նշանակում սատար կանգնել անցողիկ այս կամ այն իշխանավորին կամ իշխանական էլիտային, այլ հակառակը: Օրինակ՝ եթե մենք նախորոք ունենայինք Հայաստանի Ազգային Ժողովում սփյուռքի ներկայացչական պալատ, ապա այն կարող էր լինել “Հայ-թուրքական պրոտոկոլներ” քաղաքականության դեմ լուրջ ընդիմադիր լծակ:

Եվ վերջում ցանկանում եմ ընդգծել, որ այս հոդվածը ուրվագծային պարզաբանումներ են միայն: *“Սփյուռքի ներկայացչական պալատ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում”* գաղափարն անհրաժեշտ է դարձնել բազմաշերտ ծրագիր, որտեղ նույնիսկ մանրունքները պետք է լինեն ուսումնասիրված եւ հաշվառված:

